

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

### ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ

ՀԱՅ - ԱՆ ԳԼԻԱՐԵՆ

Ուսումն բաղմութեան լեզուաց վնասել վնասէ արդարեւ յստակութեան լեզուի ազգի միոյ , այլ բազում անդամ և ընդարձակէ զսահմանս մոաց ազգին , յաճախէ զնորանոր դարձուածս , զազդոյ և զդեղեցիկ ոճս մուծանէ նորոգ՝ և նոխացուանէ զայն : Անդատին 'ի վաղուց հայկական լեզուս մեր հանդիպեալ է միշտ ճոխ և ընտիր լեզուաց , յորոց բազում ինչ ամբարեալ է գանձս , որպիսի ոմանք են՝ Յոյն , Ասորի և Լատին բարբառքն , որք ճարտարութեամբ թարգմանչաց մերոց հոնոց և նորոց՝ նոր իմն գրեթէ ասպարէզ բացեալ են հայ բարբառոյս և ընդարձակեալ զոլորտս գաղափարաց նորա , իւրեանց նրբին և գողար փափկութեամբ : Եթէ ոչ նոյնպիսի , թերևս ոչ յոյժ նուազ օգտութիւնս բերցեն՝ 'ի գաղափարս մեր և նոր արդի լեզուք , որ այժմ եւրոպականքն յորջորջին , առաւել ծանօթք մերայոց գոզցես ամենեցուն , մանաւանդ որք գաղթականութեամբ ընակեն 'ի կողմանս պետութեանց եւրոպացոց , և ընդ նոսա ելանեն և մտանեն յիրս տուրեառիկս վաճառաց : Ո՞րչափ արդարեւ շահս չգործեաց մեզ գալիքականն բարբառ , որ այշափ ամբ են՝ զի փութով և ջանիւ ուսնալ է 'ի հայ ազգէն , մինչեւ սոսկականք իսկ և սամիկ մարդիկն չմոռուն 'ի ձեռանէ գրերականութիւնս գալիքարէն լեզուի , և փոքր 'ի շատէ հասկանան և բարբառին 'ի նոյն լեզու : Սմին բաղդի հանդիպեալ է կամ հանդիպեսցի տակաւ և անդիպական բարբառ . թէպէտ ոչ նոյնպէս՝ որպէս զդալիքացին՝ դիւրին և հեշտ իցէ յուսումն , — քանդի ժժուարութիւն հնչմանց թերևս վհատեցուացէ զոմանս — , սակայն պանծալի ճոխութիւն նորա , որ ոչ սակաւ յորդորէ զբազումս յուսումն նորին , յընթեռնուլ զմատեանս նոցա զբերթողականս և զհմուականս , այլ և անհրաժեշտ կարեռութիւն այնր ակն յայտնի երկի այժմ որոց 'ի վաճառաշահութեան և 'ի գրագրութեան արուեստս թարթափիցեն , կամ յայլ զինչ և իցէ տեսակս ճարտարութեանց , եթէ ձեռագործականքն իցեն , եթէ փաստաբանիցն ուսումն , և եթէ զեղեցիկ գպրութիւնքն :

Վկայեսցէ կարեռութեան այսր լեզուի և ընդարձակութիւն գաղթականութեանցն՝ զրո ընդ իւրեւ զրաւեալ ունի անդիպականն պետութիւն . թողեալ 'ի բաց զայնուիկ՝ որ բուն իսկ 'ի քաղաքս Մեծին բրիտանիոյ բնակեալն իցեն , յիշեացուք ևեթ զնոսա՝ որ արտաքոյ այնր սահմանաց , պանդիխտեալ նժդեհին 'ի Հնդկային աշխարհի՝ ուսումնասէր Հայք , և համբակք և արք կատարեալք , որ

ցանկացողք միշտ լեւալ են 'ի պանդխտութեան անդ իւրեանց հայրենական լեզուի , և յիշեն ըլձմամբ զանունս և զլեզուս ՀԱՅ : Աւաղ , զի սնեալ թուին բազում անդամ յոն լեզուի նոցա քան եթէ յիւրեանց բնիկ ազգային բարբառու : Այլ զի մի իսպառ անդլիականացեալ կորուցեն զհայրենի իւրեանց չնորհս լեզուին , գործածութիւն հմուտ բառագրոց կարեւոր է յոյժ այնպիսեաց : Նուիրական իմն պարտա համարիմք մեզ՝ մերովսանն նուլ զիշան և զփափաք նոցա , նորգօք և զայրցն ամենեցուն ուսումնատենչ հայսափրաց , մերովս այսու հրատապրակմամբ . և յուսամք զի յօդուտ 'ի վար արկեալ՝ պիտանի լիցի նոցա և առիթ յառաջադէմ զարգացման : Եւ յայսպիսի աշխատութիւն , եթէ շիցեմք առաջինք , սակայն և ոչ կամիմք զվերջին ունել տեղի , 'ի յորդորել զայլս յուսումն և 'ի գիտութիւն ընտիր և ճոխագոյն լեզուաց :

Եղև մեզ և այլ կէտ նպատակի յաշխատութեանս այսմիկ , զի և բանասէրք և հմուտ Անզլիացիք , որ փափաքենն ուսանել զհայ բարբառու , ունիցին առձեռն դիւրամատոյց և օգտակար իմն գործի , որով և դիւրաւ իմանայցեն և ընթեռ նուցուն զմեր մատենագիրս : Քանզի ոչ սակաւ և առ նոսա տարածեալ է ուսումն և փափաք ուսանելոյ զհայերէն բարբառու մեր : Եւ ահա այսու երկոքումք ևս պիտանի կարիցեմք լինել , մերայոցս՝ 'ի զարգացումն անզլիական լեզուի , և Անզլիացոց՝ սիրելի և ցանկալի յարդարել զհայկականս բարբառ :

Յետ ամաց ինչ հրատարակելց երկրորդ տպագրութեամբ զլինդիերէն-Հայ Բառդիրս Աւգերեան Հ . Յ . Վարդապետի մերոյ , – յոր ոչ սակաւ աշխատ եղաք յաւելմամբ , զեղմամբ , և որչափ մարթն էր՝ ուղելով զբառու – , ընծայեմք ահա 'ի լցու և զայս նմի ՀԱՅ-ԱՆԴԻԼԻԱԲԻՒՆ :

Նախկինն Հայ-Անզլիարէն բառոգիքը , երկասիրեալ 'ի նմին վաստակասէր Ռւստիս Վարդապետէ՝ աշակցութեամբ անզլիացի ձոն Պրէնստ ասպետի (տպ . 1825) , թէպէտ և արժանաւոր եղև մեծի ընդունելութեան 'ի ժամանակին յլինդիացուց և 'ի համազգեաց , այլ յետ կիսով չափ դարու ըստ ծաղկել մատենագրութեան՝ և փոփոխմունս մեծամեծս տակաւ կարեսոր թուեցաւ յաւելուլ 'ի նոյն , եթէ 'ի բառս և եթէ յոնս բանից : Զայս զդացեալ բազմաց ոչ միայն 'ի կրօնակից եղբարց , այլ և յլլզգայնոց՝ մեծաւ թախանձանօք խնդրէին զնոյն միւսանգամ 'ի լցու ընծայել ճոխագոյն բառիւք և ոճովք . զորս հաճել կամեցեալ՝ ձեռն արկաք յայս գործ տաժանական՝ աշխատ լեւալ զցայգ և զցերեկ :

Առ այս զառաջինն զհետ շողաք փոքր 'ի շատէ հին բառագրոց Աւգերեան վ . այլ յընթացս անդ գործոյս տեսեալ զի ոչ էր բաւական այնու միայն լնուլ զփափաք խնդրողացն , – քանզի բազում ինչ զեղչել և յաւելուլ հարկ լինէր , – փոփոխեցաք ամենակին զոն բառագրոցս , և ընտրեալ կալաք մեզ զայլս յարդի բառագրոց երկոպականաց . որպէս յայտնի երեխ այս յառաջին թերթս , յորս պակասէ ճոխութիւն վերջնոցն :

Ի սկզբան հատորոյս եղաք զհարերս հայ Քերականութեան , որպէս և 'ի

վախճանի Յանկս երկուս համառօտոս , մին՝ յատուկ անուանց մարդոց , և այլն , և միւս այլ՝ քաղաքաց , տեղեաց , և այլն :

Այսչափ ինչ գոյզնաբանեալ վասն փոքր աշխատութեանս , ոչ այլում իմկվ փոխարինի ակն ունիք , բայց զներողամութիւն և եթ գտանել 'ի բարեսէր կա- մաց հանդիպողաց . զայս աղաշելով՝ զի մի անաշառ զատաւորք միայն և քննողք լինիցին այսմ , յուշ ածեալ զրան մեծին Յ . Աքալիկերեայ . Երէ դատաւոր ՚ի խիստ պատրիաս կամիցի զոք արկանել , մատնեսցէ զնա 'ի բառագիրս յօ- րինել : Զի արդահատութեան թէ գտցի արժանի մերս այս ջան , սրտապնդեսցի արդեօք և աշխատող նորին ոչ ինչ վեհերել արկանել ձեռն և յայլ նմանօրինակ վաստակս՝ յօդուտ և 'ի պատիւ թորգոմեան գրոհիս , որոյ անուն և սէր միշտ վա- ռեաց զաջ և զսիրտս որդւոց Մխիթարայ՝ ճգնել 'ի զարդացումն նորին :

Հ. Մ. Պ.

## ԲԵՄԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ Ի ՏԻՐԱՄԱՑՐՆ

Երեցունց հարց արդի ձարտարախօսութեան

Պոսիկի Մելիտաց Եպիսկոպոսի , Մասիկինի Քերմենի Եպիսկոպոսի  
և Հօրե Պոտրալուի :

Յութմանենի ծերութեան իմում փափագելով գոյզն ինչ նուէր սրբոյ կու- սին մատուցանել , խորհեցայ ժողովել 'ի մի որ ինչ երեցունց Հարց քրիստոնէա- կան արդի ճարտարախօսութեան յօրինեալ է բեմասացութիւնս 'ի Տիրամայրն . յորս բովանդակին և որ ինչ Հարց նախնեաց իմաստք ներբողականք զնմանէ : Ոչ ոք 'ի բանասիրաց ժխտէ : զի ճարտարախօսքս այսոքիկ գլխաւորք՝ են Պուշէւէ Մելիտաց Եպիսկոպոս , Մասիկինի Գլերմոնի Եպիսկոպոս , և Հայրն Պուրտալու յի- սուսեան , որ ճառիւքն իւրեանց մեծացուցին զփառս Տիրամօրն , և նովաւ զիս- տուածորդւոյն , որչափ ինչ հնար է մտաց մահկանացուի ըմբոնել , և գրչի բացա- տրել զայնս :

Հաղորդս վաստակոց նոցա ընդունել և զանարժան նոցին թարգմանիչ խըն- դրեմ 'ի Տիրամօրէն :

Հ. ԵԿՈՒԱՐԴ ՀԱԿԵՐԾԻՐ  
Արքեպոս . Եկրակայ :